կիսով ջրախառն. կեղևները լմննալուն լեցու տամէճանայի մը մէջ ու բերանը խիցով աղէ մը գոցէ. այսպէս պէտք է թողուս վեց շաբաթ. այս միջոցին մէջ երբեմն պէտք է ցնցել տամէճանան։ Եւ վեց շաբաթէն ցքահանէ, և պահէ։

Մորջոյ համեմիչ հնոտեղէնք. — Իսկ համեմիչ հնտեղէնները, ինչպէս են անիսոնը, Ջինի անիսոնը, սամիթը[1], մախակը[2], և այլն, զասոնք նախ ծեծէ, և ետքը ջրախառն օղիով ինչպէս որ վերը ըսինք դիր տամէճանաներու մէջ ինչուան վեց շաբաթ, միշտ երբեմն ցնցելով զտամէճանաները, անկէ ետև կը ցքահանես ու կը պահես։

Մորջոյ համեմիչ թայիր. — Այնպէս ալ համեմիչ ծառի կեղևները, զոր օրինակ կինամոնը ծեծէ, մէկ երկու կաթիլ ջուր վրան կաթեցընելով որ աւելի բարակ մասունքը չցրուին. և ետքը ըրէ վերի ըսածնուս պէս։

Լոծոն համեմիչ խէնթ։ — Օմուռը, Հալուէն[2], ստորաքսը[3], և Ն, որոնք էլիքսիրին գլխաւոր մասունքն են, քիչ չափով կը գործածուին քանի մը ըմպելիքներու մէջ։ Այսոնք կը լուծուին բարկ ծղոյ մէջ. և քիչ քանակ պէտք է գործածել որ ըմպելիքը չլեղուրնայ։

Այս նիւթերը ցքահանած պատրաստ պէտք է պահել այլ և այլ տամէճանաներու մէջ անուններին վրանին նշանած, որպէս զի ուղած ժամանակդ առնցմով ուզուլի շինես։ Այս ալ պէտք է դիտել որ ամենիւ ուզուլի շինելու համար ցքահանած համեմիչ նիւթերը ցքահանելէն վեց ամիս ետքը պէտք է շինել ուզուլին։ Իսկ թէ որ չուզես սպասել վեց ամիս, պէտք է որ քանի մը օր շատ անգամ ցնցես տամէճանան, որպէս զի դիւրանայ զանգումը։

Կը շարունակուի։

1 ՏՀ. Ռեզինէ։
2 ՏՀ. Գարէնֆիլ։
3 ՏՀ. Իւ։
4 ՏՀ. Գոբա թիանիֆ։

Բարիզու մէջ գործածուած կերակրեղէնի չափը։

Բարիզու մէջ ամէն տարի սպառուած հացն է 179,987,791 քիլոկրամ, 65,000,000 քիլ. միս, 10,814,399 քիլ. խոզի միս, 10,265,103 քիլ. հաւեղէն և ոսի միս, 13,444, 850 քիլ. տեսակ տեսակ ձկունք, 10,198,239 քիլ. կարագ, 5,104,182 քիլ. պանիր, 8,700,000 քիլ. հաւկիթ, 5,006,770 քիլ. խմորեղէն, 3,993,083 քիլ. սնդարար խմոր, բրինձ, և այլն. 7,500,000 քիլ. շաքար, 1,518,480 քիլ. շաքարեղէն, 246,000 քիլ. մեղր, 3,000,000 քիլ. խաղուէ, 1,000,000 քիլ. չիքոլաթ, 207,0004, 657 քիլ. պտղեղէն, 2,082,000 քիլ. նարինջ և լեմոն, 3,952,000 քիլ. չոր պտուղ, 10,400 քիլ. անանաս, 134,925, 391 քիլ. խոտեղէն և բանջար, 1,325, 000 քիլ. չոր խոտեղէնք, 25,750 քիլ. թարթուֆ, 597,815 քիլ. աղ, 270, 000 քիլ. մանանեխ, 107,500 քիլ. քացախի մէջ պահուած վարունգ և սոխ, 135,492 պղպեղ, և այլն. 260,156 քիլ. խորոված սոխ և բանջարեղէնք, 1,105,925 քիլ. կերակրոյ համար գործածուած ալիւր, 3000 քիլ. վանիլիա 7,500,000 քիլ. սառ։ Բաց ասոնցմէ, Բարիզու մէջ տարուէ տարի գործածուած ծխախոտն է 1,604,601 քիլ։ Այսոնց ամենուն գումարէն կ'երևնայ թէ միայն Բարիզու մէջ ամէն տարի գործածուած կերակրեղէններու սպառումը 732,105,796 քիլ. կը հասնի։

Ըմպելեաց նկատմամբ ալ Բարիզու մէջ տարուէ տարի 119,300, 000 լիտր գինի կը խմուի, 14,000,500 լիտր գարեջուր, 2,272000 լիտր ցքի, 12,729, 700 լիտր ալքուլ, 109,291,086 լիտր կաթ, 344,186 լիտր՝ օղիի մէջ պահուած պտուղ. 620,236 լիտր անոյշ ըմպելիք. 2,007,300 լիտր եղ, 2,043, 800 լիտր քացախ. 100,000 լիտր նարընջի ծաղկի ջուր. 3,218,497,000 լիտր բնական ջուր։ Այսոնց ալ ամենուն բովանդակութիւնն է 3,402,474,738 լիտր։